

Մարգարեա Գագիկ Միրիջանյանի շնորհավորական ուղերձն Անկախության հռչակագրի 28-րդ տարեդարձի կապակցությամբ

23.08.2018



Հարգելի հայրենակիցներ,

Մեր միասնական կամքի արդյունքում 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում ընդունվեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որը շատ կարևոր էր մեր երկրի ապագայի համար: Այն մինևույն ժամանակ մեր ժողովրդի կրած դառը պայքարի և սեփական ինքնիշխանությանը հասնելու, երկիրը կառուցելու վճռականության արդյունքն էր:

Անկախության հռչակագիրն անսահման երջանկություն և ոգևորություն պատճառեց համայն հայությանը, քանզի կոչված էր իրականացնելու հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ անկախ պետականության վերականգնումը:

Միրելի արմավիրցիներ, Հայաստանի Հանրապետության հպարտ և անկախ քաղաքացիներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիս Անկախության հռչակագրի 28-րդ տարեդարձի կապակցությամբ՝ մաղթելով խաղաղություն, ուժեղ կամք և առաջ շարժվելու վճռականություն:

*Հավագույն ցանկություններով՝
Արմավիրի մարգարեա Գագիկ Միրիջանյան*